ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՐԳԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 24.07.2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ ԳԱԳԻԿԻ ԲԱԼԱԲԵԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ ԿԳ-26062-2-Ա ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետև նաև՝ Պալատ**) խորհուրդը՝ նախագահությամբ Ռոման Ահարոնյանի, խորհրդի անդամներ՝ Թամարա Բաղդասարյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Լիլիթ Ղազանչյանի, Ցոլակ Մարգարյանի, Դավիթ Մելքոնյանի և Վարազդատ Հարությունյանի,

գրավոր ընթացակարգով քննության առնելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի թիվ ԿԳ-26062-2-Ա որոշման բողոքարկումը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**.

Պալատի գլխավոր հաշվապահի 05.02.2026թ. տեղեկանքի համաձայն՝ **Փաստաբան** Շուշանիկ Գագիկի Բալաբեկյանի անդամավճարի ընդհանուր պարտքը 05.02.2026թ. դրությամբ կազմել է 210.000 **(երկու հարյուր տաս հազար) ՀՀ դրամ, որից վերջին 18 ամիսների համար՝ 2024թ. հունիսից 2025թ. նոյեմբեր ամիսը ներառյալ, կազմել է 90.000 ՀՀ դրամ: Միաժամանակ վերջինս չի վճարել հերթական ամսվա անդամավճարը:**

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Պալատի նախագահի 23.02.2026թ. թիվ 159-**Ա/ԿԳ**-26062 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել Փաստաբանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետև՝ Կանոնագիրք)** 2.9.1 և 9.1.3 ենթակետերի խախտման հատկանիշներով:

Պալատի կարգապահական հանձնաժողովը (**այսուհետև՝ Հանձնաժողով**), 24.07.2026 թվականի թիվ **ԿԳ**-26062-2-**Ա** որոշմամբ (**այսուհետև՝ Որոշում**) Փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն»՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, Կանոնագրքի 2.9.1 և 9.1.3 ենթակետերի խախտման համար:

Փաստաբանը Որոշման դեմ 07.09.2026թ. բողոք է ներկայացրել:

2. **ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի թիվ ԿԳ- ԿԳ**-26062-2-**Ա որոշման էությունը.**

Հանձնաժողովը Որոշմամբ նշել է հետևյալը.

«(…) Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում ամրագրվել են անդամավճար չվճարելու համար փաստաբանների նկատմամբ կարգապահական տույժի ընտրության համար որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում կոնկրետ կարգապահական գործով Հանձնաժողովը կարող է կիրառել ավելի մեղմ կամ ավելի խիստ կարգապահական տույժ՝ «նկատողություն» կամ «խիստ նկատողություն» տույժի տեսակ:

Տվյալ դեպքում, հաշվի առնելով, որ Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում փաստաբանի կողմից անդամավճարի վճարման պարտականության չկատարման վարքագիծը, որպես կարգապահական խախտում, գնահատվում է այնքան խիստ, որ դրա համար ուղղակիորեն նախատեսված է «արտոնագրի գործողության դադարեցում» կարգապահական տույժի տեսակի նշանակման հնարավորությունը, ինչպես նաև այն, որ Օրենքով և Կանոնագրքով հստակ սահմանված են այն պարտադիր պայմանները, որոնց համապատասխանության դեպքում նման վարքագիծ դրսևորած փաստաբանի նկատմամբ կարող են նշանակվել «նկատողություն» կամ «խիստ նկատողություն» կարգապահական տույժի տեսակները, Հանձնաժողովը գտնում է, որ փաստացի նույն վարքագիծը դրսևորած՝ անդամավճարը չվճարած, սակայն հետագայում՝ մինչև տվյալ գործով Հանձնաժողովի որոշումը կայացնելու օրվա դրությամբ, կուտակված պարտքը մարած փաստաբանի նկատմամբ ամենամեղմ պատասխանատվության միջոց կիրառելը կդիտարկվի անհամաչափ:

Այս համատեքստում, Հանձնաժողովը հաշվի է առնում այն փաստը, որ Փաստաբանն ըստ էության գոյացրել է ավելի քան 18 ամսվա պարտք (այդ թվում՝ չի կատարել Պալատի նախագահի՝ կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշման կայացման օրվա դրությամբ վերջին վեց ամիսների մասով անդամավճար վճարելու պարտականությունը), ինչպես նաև չի վճարել հերթական ամսվա անդամավճարը:»

Փաստաբանի կողմից անդամավճարի երկարատև չվճարումը, որը սույն դեպքում կազմում է ավելի քան 6 տարի՝ խաթարում է Պալատի բնականոն գործունեությունը և ֆինանսական կանխատեսելիությունը:

Հանձնաժողովը, հաշվի առնելով նախկինում միևնույն փաստական հիմքերով գործերով իր արտահայտած դիրքորոշումը, ինչպես նաև անդամավճարներ չվճարելու հարցում միասնական մոտեցում ցուցաբերելու նկատառումից ելնելով, գտնում է, որ այն փաստաբանը, որը չի վճարել մինչև 20 ամսվա անդամավճարը, **առաջին անգամ** Կանոնագրքի 9.1.3 ենթակետի հնարավորությունից օգտվելու դեպքում (եթե ամբողջությամբ վճարել է անդամավճարի պարտքը), ենթակա է կարգապահական պատասխանատվության **<u>նկատողության</u>** ձևով, իսկ 20 ամիս և ավելի անդամավճարի պարտք ունեցող փաստաբանի դեպքում (եթե ամբողջությամբ վճարել է անդամավճարի պարտքը)՝ կիրառվում է **<u>խիստ նկատողությունը</u>**:

Նշված տարբերակումը հիմնված է օբյեկտիվ, կանխատեսելի և ստուգելի չափանիշի՝ անդամավճարի վճարման պարտականության չկատարման տևողության վրա: Անդամավճարի վճարման պարտականության առավել երկարատև չկատարումն արտահայտում է կարգապահական խախտման առավել տևական բնույթ և, մյուս հավասար պայմաններում, պահանջում է առավել խիստ կարգապահական արձագանք: Ընդ որում, պարտքի ամբողջական մարումը չի վերացնում նախկինում արդեն իսկ կատարված կարգապահական խախտումը, քանի որ փաստաբանը սահմանված ժամկետներում չի կատարել անդամավճար վճարելու իր պարտականությունը: Պարտքի ամբողջական մարումն իրավական նշանակություն է ստանում կիրառելի կարգապահական տույժի տեսակի ընտրության հարցում՝ Կանոնագրքի 9.1.3 ենթակետի ուժով բացառելով «փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում» կարգապահական տույժի կիրառումը և պայմանավորելով ընտրությունը «նկատողություն» ու «խիստ նկատողություն» տույժերի միջև:

Ամփոփելով վերոգրյալը, ինչպես նաև հաշվի առնելով այն փաստը, որ սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ Փաստաբանն ամբողջությամբ վճարել է Պալատի նախագահի 159-Ա/ԿԳ-26062 որոշման կայացման պահի դրությամբ առկա իր անդամավճարի պարտքը՝ Հանձնաժողովը Փաստաբանի նկատմամբ որպես կարգապահական տույժ կիրառում է «խիստ նկատողություն» տույժի տեսակը»:

3. **<u>Բողոքաբերի հիմնավորումները և պահանջը</u>**.

Փաստաբանը 03.09.2026թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ նախ ներողություն է խնդրում որոշ հանգամանքների մասին Պալատին ժամանակին չտեղեկացնելու և անդամավճարները սահմանված ժամկետներում չվճարելու կապակցությամբ:

Իր դիրքորոշման հիմնավորման նպատակով Փաստաբանը նշել է, որ 2023 թվականի հուլիսին տեղափոխվել է Միացյալ Նահանգներ, իսկ մոտավորապես նույն ժամանակահատվածում իր մոտ ախտորոշվել է վահանաձև գեղձի քաղցկեղ: Այդ ժամանակահատվածում նա եղել է հղի:

Փաստաբանը հայտնել է նաև, որ 2024 թվականի դեկտեմբերին Միացյալ Նահանգներում ծննդաբերել է, որից հետո սկսել է քաղցկեղի հետ կապված բուժումը, անցել է վահանաձև գեղձի հեռացման վիրահատություն և շարունակել հետագա բժշկական հսկողությունն ու բուժումները:

Փաստաբանը նշել է, որ անդամավճարները չվճարելը պայմանավորված չի եղել Պալատի նկատմամբ անհարգալից վերաբերմունքով, այլ այն հանգամանքով, որ տվյալ ժամանակահատվածում իր ուշադրությունը կենտրոնացած է եղել առողջական վիճակի, բուժման, վիրահատության, երեխայի ծննդի և խնամքի հետ կապված հարցերի վրա:

Ելնելով վերոգրյալից՝ Փաստաբանը խնդրել է հաշվի առնել իր կողմից ներկայացված հանգամանքները և վերանայել 24.07.2026թ. որոշումը:

4. **<u>Բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքները</u>**.

Ներկայացված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Փաստաբանի անդամավճարի ընդհանուր պարտքը 05.02.2026թ. դրությամբ կազմել է 210.000 **(երկու հարյուր տաս հազար) ՀՀ դրամ, որից վերջին 18 ամիսների համար՝ 2024թ. հունիսից 2025թ. նոյեմբեր ամիսը ներառյալ, կազմել է 90.000 ՀՀ դրամ: Միաժամանակ վերջինս չի վճարել հերթական ամսվա անդամավճարը:** *Նշված փաստը հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 05.02.2026թ. տրամադրված տեղեկանքով:*

2) Փաստաբանն ամբողջությամբ մարել է Պալատի նախագահի 23.02.2026թ. թիվ 159-**Ա/ԿԳ**-26062 որոշման կայացման պահի դրությամբ առկա իր անդամավճարի պարտքը և 24.07.2026թ. դրությամբ անդամավճարի գծով որևէ պարտք չունի: *Նշված փաստը հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի 24.07.2026թ. տեղեկանքով:*

5. **<u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը</u>**.

Պալատի խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովի Որոշումը պետք է թողնել անփոփոխ հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք) 39.11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *բողոքի քննության ժամանակ* ***խորհուրդը բողոքարկվող որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում****:*

Օրենքի 39.11-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ *բողոքի քննությունից հետո խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.*

1) կարգապահական հանձնաժողովի որոշումն անփոփոխ թողնելու մասին.

2) կարգապահական հանձնաժողովի որոշումն ամբողջությամբ կամ մասնակի վերացնելու մասին:

Խորհուրդն արձանագրում է, որ Հանձնաժողովի որոշման վերանայման շրջանակում ստուգման է ենթակա դրա իրավաչափությունը՝ այն ապացույցների, փաստական տվյալների և կողմերի ներկայացրած դիրքորոշումների հաշվառմամբ, որոնք առկա են եղել կարգապահական գործում և հասանելի են եղել Հանձնաժողովին որոշումը կայացնելու պահին:

Սույն դեպքում Բողոքաբերը չի վիճարկում անդամավճար վճարելու իր պարտականության առկայությունը, անդամավճարները սահմանված ժամկետներում չվճարելու փաստը կամ Հանձնաժողովի կողմից հաստատված պարտքի չափը: Բողոքի բովանդակությունից հետևում է, որ վերջինս, ըստ էության, վիճարկում է իր նկատմամբ կիրառված կարգապահական տույժի համաչափությունը՝ խնդրելով հաշվի առնել անդամավճարների չվճարման ժամանակահատվածում իր առողջական և ընտանեկան վիճակի հետ կապված հանգամանքները: Մինչդեռ կարգապահական գործի նյութերից չի հետևում, որ Բողոքաբերի կողմից վկայակոչվող առողջական վիճակի, հղիության, երեխայի ծննդի և խնամքի վերաբերյալ հանգամանքները ներկայացված են եղել Հանձնաժողովին մինչև Որոշման կայացումը: Հետևաբար, Հանձնաժողովը դրանց գնահատման հնարավորություն չի ունեցել, իսկ այդ հանգամանքների՝ բողոքարկման փուլում ներկայացվելն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ Հանձնաժողովի Որոշումը ոչ իրավաչափ համարելու համար:

Միաժամանակ Խորհուրդը, կասկածի տակ չդնելով Բողոքաբերի կողմից ներկայացված տեղեկությունները, գտնում է, որ դրանց իրավական նշանակությունը պետք է գնահատվի Պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/6-Լ որոշմամբ հաստատված «Փաստաբանի անդամավճարի, հավակնորդի, փաստաբանի օգնականի մուտքի և այլ վճարների չափերը, ինչպես նաև դրանք վճարելու» կարգի համապատասխան դրույթների համատեքստում:

Կարգով առողջական վիճակի, հղիության, երեխայի ծննդի և խնամքի հետ կապված մի շարք հանգամանքների համար նախատեսված են անդամավճարի վճարումից լրիվ կամ մասնակի ազատման հնարավորություններ: Միաժամանակ դրանց կիրառումը պայմանավորված է Կարգով սահմանված ընթացակարգային պահանջների պահպանմամբ՝ համապատասխան դիմում և հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելով, իսկ Կարգով նախատեսված դեպքերում՝ նաև իրավասու մարմնի համապատասխան որոշմամբ: Մասնավորապես, հղիության և երեխայի ծննդի հետ կապված

արտոնությունների համար սահմանված են դիմելու և անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու հատուկ ժամկետներ, իսկ ծանր հիվանդության հիմքով արտոնության կիրառումը նախատեսված է համապատասխան դիմումի, բժշկական փաստաթղթերի և Պալատի խորհրդի որոշման առկայության դեպքում: Այսպիսով, Կարգը տվյալ հանգամանքների առկայությունը ինքնին չի դիտարկում որպես անդամավճարի վճարման պարտականության ինքնաբերաբար դադարման կամ արդեն առաջացած պարտքի վերացման հիմք: Համապատասխան արտոնությունը կարող է առաջացնել իրավական հետևանք միայն Կարգով նախատեսված ընթացակարգի պահպանման դեպքում:

Գործի նյութերից չի հետևում, որ Բողոքաբերը համապատասխան ժամանակահատվածում օգտվել է Կարգով նախատեսված ընթացակարգերից և ներկայացրել է համապատասխան արտոնություն ստանալու համար անհրաժեշտ դիմումն ու փաստաթղթերը կամ ստացել է այդ հիմքով համապատասխան որոշում: Հետևաբար, այժմ նշված հանգամանքների վկայակոչումը չի կարող հետադարձ ուժով առաջացնել այն իրավական հետևանքները, որոնք Կարգը կապել է սահմանված կարգով և ժամկետներում համապատասխան գործողությունների կատարման հետ: Հակառակ մոտեցումը կնշանակեր փաստացի անտեսել Կարգով սահմանված ընթացակարգը և այն փոխարինել հետագա կարգապահական կամ բողոքարկման վարույթի շրջանակում ներկայացվող տեղեկություններով, մինչդեռ նման կարգավորում առկա չէ:

Օրենքի 39.10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս հաշվի են առնվում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը և փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Օրենքի 39.10-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ առնվազն տասնութ ամսվա անդամավճարի չափով պարտք ունեցող փաստաբանի կողմից հերթական որևէ ամսվա անդամավճարը չվճարելու դեպքում կարող է կիրառվել փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում կարգապահական տույժը, բացառությամբ այն դեպքի, երբ մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման կայացումը փաստաբանն ամբողջությամբ վճարել է պարտքի գումարը և Հանձնաժողովի որոշումը կայացնելու օրվա դրությամբ Պալատի նկատմամբ անդամավճարի գծով որևէ պարտք չունի:

Կանոնագրքի 9.1.3 ենթակետով ևս սահմանված է, որ նշված պայմաններում պարտքն ամբողջությամբ վճարելու դեպքում Հանձնաժողովը փաստաբանի նկատմամբ կիրառում է «նկատողություն» կամ «խիստ նկատողություն» կարգապահական տույժերից մեկը:

Սույն դեպքում Հանձնաժողովի կողմից հաստատվել է, որ Փաստաբանի անդամավճարի ընդհանուր պարտքը 05.02.2026թ. դրությամբ կազմել է 210.000 ՀՀ դրամ, որից վերջին տասնութ ամիսների համար՝ 90.000 ՀՀ դրամ, ինչպես նաև Փաստաբանը չի վճարել հերթական ամսվա անդամավճարը: Միաժամանակ մինչև Հանձնաժողովի որոշման կայացումը Փաստաբանը ամբողջությամբ մարել է իր անդամավճարի պարտքը:

Խորհուրդն արձանագրում է, որ պարտքի ամբողջական մարման հանգամանքը Հանձնաժողովի կողմից հաշվի է առնվել և գնահատվել Օրենքի 39.10-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի և Կանոնագրքի 9.1.3 ենթակետի շրջանակներում՝ բացառելով առավել խիստ՝ փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում կարգապահական տույժի կիրառումը և տույժի ընտրությունը սահմանափակելով «նկատողություն» և «խիստ նկատողություն» տեսակների միջև:

Միաժամանակ Հանձնաժողովը տույժի ընտրության հարցում հաշվի է առել անդամավճարի վճարման պարտականության չկատարման տևողությունը և նույնաբնույթ գործերով կիրառվող միասնական մոտեցումը, որի համաձայն՝ մինչև 20 ամսվա անդամավճարի պարտքի դեպքում, պարտքն ամբողջությամբ մարելու պայմաններում, կիրառվում է «նկատողություն», իսկ 20 ամիս և ավելի անդամավճարի պարտքի դեպքում՝ «խիստ նկատողություն»:

Խորհուրդը գտնում է, որ նման մոտեցումը համապատասխանում է կարգապահական պատասխանատվության համաչափության պահանջներին, քանի որ անդամավճարի վճարման պարտականության առավել երկարատև չկատարումն արտահայտում է խախտման առավել տևական բնույթ և, մյուս հավասար պայմաններում, կարող է պայմանավորել առավել խիստ կարգապահական արձագանք: Սույն բողոքով ներկայացված հանգամանքները, հաշվի առնելով նաև դրանց՝ Հանձնաժողովի քննության առարկա չլինելը և Կարգով նախատեսված ընթացակարգերից Բողոքաբերի ժամանակին չօգտվելը, հիմք չեն տալիս շեղվելու Հանձնաժողովի կողմից նույնաբնույթ գործերով կիրառված մոտեցումից: Հետևաբար, Բողոքաբերի ներկայացրած փաստարկները չեն հիմնավորում Հանձնաժողովի կողմից կիրառված «խիստ նկատողություն» կարգապահական տույժի փոփոխման անհրաժեշտությունը:

Այսպիսով, Խորհուրդը հանգում է այն եզրակացության, որ Հանձնաժողովի 24.07.2026թ. թիվ ԿԳ-26062-2-Ա որոշումը ներկայացված բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում իրավաչափ է և վերացման կամ փոփոխման ենթակա չէ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 20-րդ կետի, 39.11**-րդ հոդվածի** 8**-րդ մասի** 1**-ին կետի և ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության** 16.26**-րդ կետի պահանջներով՝ Խորհուրդը՝**

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 24.07.2026 թվականի «Փաստաբան Շուշանիկ Գագիկի Բալաբեկյանի (արտոնագիր՝ թիվ 2317) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին» թիվ ԿԳ-26062-2-Ա որոշման դեմ Շուշանիկ Բալաբեկյանի կողմից 03.09.2026 թվականին ներկայացված բողոքը մերժել:

2. Անփոփոխ թողնել ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 24.07.2026 թվականի թիվ ԿԳ-26062-2-Ա որոշումը:

3. Հանձնարարել Խորհրդի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն ստանալու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Ռոման Ահարոնյան**

07 հոկտեմբերի 2026թ.
թիվ ԿԳ/28-Ա
ք. Երևան